10.57192/18291864-2023.4-143

Շողիկ Բ. Խաչատրյան
Բանասիր. գիտ. թեկնածու

ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ՀՈԳՈՒ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
Ավետիք Իսահակյանի ծոցատետրերի անտիպ էջերը*

Բանալի բառեր – օրագիր, անտիպ ծոցատետր, կառուցվածք, ընդհանուր բնութագիր, աֆորիզմ, ոճական հնարավորություններ, ստուգաբանություն, ժամփորդական տպավորություններ, քաղաքական դիտարկումներ, ստեղծագործական աշխատանոց, գրական մեթոդ, քնարական հերոս, քնարերգության մոտիվներ, մանրապատում:

Մուտք

1977 թ. անվանի բանասեր-բնագրագետ Ա. Ինճիկյանը հրատարակության պատրաստեց Ավետիք Իսահակյանի «Հիշատակարանը»՝ բանաստեղծի գրառումների տարբեր տետրերից հավաքելով ու համակարգելով գրեթե ամբողջ բնագիրը: Օրագրային հարուստ նյութն այդպիսով մտավ գիտական շրջանառության մեջ և սկսեց հաճախակի օգտագործվել Իսահակյանի կյանքի ու ստեղծագործության այս կամ այն կողմը քննելիս:

Ամբողջական օրագրերի հրապարակումից հետո անտիպ մնաց բանաստեղծի ծոցատետրերի մի ստվար քանակություն: Դրանցից մի քանիսը զանազան պարբերականներում հրապարակել են Աբաս և Ավիկ Իսահակյանները: Աբաս Իսահակյանը մամուլում տպագրել է նաև Իսահակյանի ծոցատետրերից քաղված ասույթներ և աֆորիզմներ, իսկ Ավիկ Իսահակյանը 2001 թ. հավաքել և մի ամբողջական գրքով հրատարակել է նրա ասույթները, որոնց մի մասը քաղված է հենց ծոցատետրերից ու օրագրերից[1]:

---

* Հոդվածն ընդունվել է տպագրության 20.09.2023:
1 Տես **Իսահակյան Ավ.**, Աֆորիզմներ, Եր., 2001:

1. Ծոցատետրերի կառուցվածքն ու ընդհանուր բնութագիրը

Ծոցատետրային գրառումները Իսահակյանը կատարել է օրագրային գրառումներին զուգահեռ, երբեմն՝ դրանց փոխարեն: Ծոցատետրերում հավաքված են բովանդակությամբ, բնույթով ու ձևով տարատեսակ գրառումներ: Դրանք կարևոր աղբյուրներ են բանաստեղծի կյանքի, աշխարհընկալման, ստեղծագործական աշխատանքի ուսումնասիրման համար:

Ծոցատետրային գրառումների կառուցվածքի և ընդհանուր բնութագրի մասին խոսելը կարևոր է, քանի որ դրանց ճնշող մասը դեռևս անտիպ է և անծանոթ ոչ միայն ընթերցողների լայն շրջաններին, այլև շատ մասնագետների: Դրանք զանազան տետրերում, գրքույկներում կամ առանձին թերթիկների վրա արված բազմազան ու բազմաբովանդակ գրառումներ են: Հաճախ նույն տետրում հանդիպում ենք տարբեր ժամանակներում արված գրառումների: Ավելի վաղ արված գրառումների ազատ մասերում, երբեմն՝ տարիներ անց, ավելացվել են նոր հատվածներ՝ նախորդների հետ բովանդակային ոչ մի կապ չունեցող: Հիմնականում ձևակերպված են բանաստեղծի խոհերը, մտքերը, դատողությունները կյանքի բազմաբնույթ երևույթների վերաբերյալ: Դրանց մի զգալի մասն աֆորիզմների, թևավոր արտահայտությունների արժեք ունի: Ահա մի քանի օրինակ. «Մայրերի համար մեռած զավակ չկա: Որդիները անմահ են: Միշտ կենդանի են՝ ինչքան ժամանակից ի վեր որ մեռած լինեն»[2], «Կնոջ մարմինը շաղափել – կ'նշանակե երկինք շոշափել»[3]:

Զգալի տեղ են գրավում բնության տեսարանների բանաստեղծական կամ փիլիսոփայական արժևորումները, բույսերի ու կենդանիների մասին ամենատարբեր բնախոսական տվյալները, հետաքրքիր դիտարկումները առհասարակ բնության երևույթների վերաբերյալ: Իսահակյանն ապշեցուցիչ զգայնությամբ է նկատում այն ամենը, ինչ կատարվում է իր շուրջը, ինչ գոյություն ունի հսկա ու խորհրդավոր տիեզերքում: Եվ այդ զգայական բռնկումները հաճախ դառնում են անակնկալ պատկերներ: Այսպես. «Հայոց լեռները մերկ ու լերկ՝ բռունցքների նման երկինք ցցած», «Հալի-Ձորի բնությունը կոսմիկա-

---

2 ԳԱԹ, Ավ. Իսահակյանի ֆոնդ, 738-II, էջ 14:
3 Նույն տեղում, 774-II, էջ 4:

կան բան է...»[4], «Ծաղիկներն ու հավքերը իրար շատ նման են – պես-պեսագույն, շքեղ, վառ-վառ, նխշուն, զառ-վառ, ալ-վալ, ալ-բալ...»[5]:

Վերջին գրառումը վկայում է բառերի անսահման աշխարհի հանդեպ բանաստեղծի մեծ հետաքրքրության, դրանց ռիթմի, ոճական հնարավորությունների, գեղարվեստական հնչողության նուրբ զգացողության մասին: Ծոցատետրային գրառումներում բազմաթիվ են հայերեն բառերի ստուգաբանության փորձերը, օտար բառերի բացատրությունները, փոխաբերությունների ու այլաբանությունների շարքերը: Ահա մի քանի բնորոշ օրինակներ.

«Մեթաֆորներ.

Կայմերի անտառը, ցողերի ալմաստները, փոթորիկը զարգացավ, հողմը լալիս է, ոռնում է, պետության սյուները, կասկածի թույնը, անջատման դառնությունը, նա մեր պարիսպն է, հասավ կյանքի նավահանգստին, նա սալոնների աստված է, այտերի վարդը:

Մեթաֆորները բնությունը շնչավորում են՝ գետը գնում է, առավոտը ժպտում է, երկինքը լաց է լինում»[6]:

«Սև, մռայլ ագռավ, տխուր, մեղմ որոր.
Դշխուհի սիրամարգ»[7]:

Կամ էլ.

«Զարատուշտրա (պարսկերեն)
Զարդուշտ.
Ուշտրա – ուշտ (զենդ)
շութուր – պարսկական»[8]:

«Ռահ գետ, Ռաս գետ, Արաքսի անվան հետքերն են»[9]:

«Խաղզիս կամ խաղզէս – երգիչ, երգող:
Իբր Մշի բարբառի խոսք, Արմ. Շահմուրադյանի ասելով»[10]:

---

4 Նույն տեղում, 740–II, էջ 5:
5 Նույն տեղում, 736–II, էջ 5:
6 Նույն տեղում, 740–II, էջ 10:
7 Նույն տեղում, 736–II, էջ 5:
8 Նույն տեղում, 740–II, էջ 11:
9 Նույն տեղում, 751–II, էջ 16:
10 Նույն տեղում, 773–II, էջ 10:

Ծոցատետրերում մեծ տեղ են զբաղեցնում աշխարհի նշանավոր փիլիսոփաներից, արվեստագետներից արված քաղվածքները, տարբեր ժողովուրդների ասույթներն ու ասացվածքները, ժողովրդական սովորույթների նկարագրությունները: Ահա բազմաթիվ օրինակներից մի քանիսը.

«Հեռվից է եկել, ինչքան ուզի, կարող է ստել (ֆրանս. առած)»[11]:

«Սրտիս մեջը տեղ լինի,

Կճուճի մեջ եղ կլինի (հայկ. առած)»[12]:

«Ով եղավ ռես,

Մենք մնացինք էս» կամ «էլի էս»[13]:

«Եթե վիշտը միշտ ծխար կրակի պես, ամբողջ աշխարհը կծածկեր մխով (Բալխացի Շահիդ, IX դարում)»[14]:

«Ես լավ ճանաչում եմ ձին, բայց չեմ ճանաչում ձիությունը (Արիստոտել)»[15]:

«Ամեն անգամ ես իմ գլխիս տերը չեմ, հուշը անցյալ մեղանչանքիս ինձ տանջում է: Ընդունենք, որ դու կարող ես ներել մեղապարտին, ով Աստված իմ, սակայն հուշն իմ մեղանչանքիս գիտակցության մեջ միշտ անջինջ է, իմ ձեռքս չէ (Օ. Խայամ)»[16]:

«Ամեն մի մարդու մահով կործանվում է մի տիեզերք (Հ. Հայնե)»[17]:

Երբեմն էլ Իսահակյանը ծոցատետրերում գրառում էր բանաստեղծական ամբողջական կտորներ Սայաթ-Նովայից, Մ. Մեծարենցից կամ էլ օտարազգի որևէ հեղինակից՝ տողացի թարգմանությամբ: Հաճախ էլ պարզապես նշում էր կարդացած կամ կարդալիք գրքերը, հեղինակների անունները առանձին կամ ցուցակներով, ինչպես.

«Էնցիկլոպեդիա
հնդկական գրականություն
դև, սատանա
– Սրվանձտյան...
– ազգագրական նյութեր

11 Նույն տեղում, 736-II, էջ 16:
12 Նույն տեղում, 740-II, էջ 15:
13 Նույն տեղում, էջ 7:
14 Նույն տեղում:
15 Նույն տեղում, 751-II, էջ 22:
16 Նույն տեղում, 773-II, էջ 24:
17 Նույն տեղում, 774-II, էջ 3:

– Zenda - Vesta

(Զենդա – վեստա)

– Պոռշյան

Եզնիկ Կողբացի (գերմաներեն)»[18]:

Ծոցատետրերում մեծ տեղ են զբաղեցնում նաև ճամփորդական տպավորությունները: Կան Եվրոպայում արված գրառումներ, սակայն հիմնական մասը հայրենիք վերադառնալուց հետո հայաստանյան ուղևորությունների, հանդիպումների վերաբերյալ նշումներն ու տպավորություններն են: Որոշ նկատառումներ կան Հայաստանի խորհրդայնացման և առհասարակ սոցիալիզմի գաղափարախոսության առնչությամբ: Քաղաքական դիտարկումների հանդիպում ենք նաև ավելի վաղ շրջանի տետրերում, սակայն 1915 թվականի ողբերգությունից հետո դրանց տրամադրությունն ու բովանդակությունը որակապես փոխվում են: «Ինչ որ հայությանը պատահեց,– մտորում է բանաստեղծը,– անբնական, անտրամաբանական, անուն չունեցող բան էր, և ոչ մի բանի նմանող – թուրքերի ջարդ: Հասկանալի է, անուղղակի ռուսական ջարդ, և համաձայնականների կողմից ջարդ – Կիլիկիա, Իզմիր, Կովկաս...

Եվ այս բոլորը տես հայի աչքերով – այս թշվառությունը, և լսիր հայի ականջով... ու հայի սրտով»[19]:

Ծոցատետրերում հաճախակի հանդիպող տնտեսական հաշիվները, կենցաղին, հանդիպումներին ու այցելություններին վերաբերող նշումները, առողջության և առողջապահության վերաբերյալ տարբեր տեղերում արված գրառումները և դեղատոմսերը, այդ հարցերին նվիրված նույնիսկ ամբողջական տետրը[20] և այլ գրառումներ միայն կենսագրական արժեք ունեն: Առավել հետաքրքիր են թերևս այն գրառումները, որոնք այս կամ այն կերպ առնչվում են Իսահակյանի բուն ստեղծագործությանը՝ բացելով նրա գրական աշխատանոցի բազմազան շերտեր: Ինչպե՞ս են ձևավորվում գրողի ոճը, նրա գրական մեթոդի առանձնահատկությունները, ինչպե՞ս է հում նյութը մշակվում, վերաճում գեղարվեստական իրողության. ահա ոչ լրիվ շարքը այն խնդիրների, որոնց լուսաբանմանը կարող են օգնել ծոցա–

18 Նույն տեղում, 751–II, էջ 23:
19 Նույն տեղում, 738–II, էջ 8:
20 Տե՛ս նույն տեղում, 771–II:

տետրային գրառումները:

2. Ստեղծագործական կյանքի վավերապատումը

Ավետիք Իսահակյանի օրագրերն ու ծոցատետրերը յուրօրինակ մտերմիկ մուտք են ապահովում դեպի բանաստեղծի ստեղծագործական աշխարհ: Դրանք վկայում են, որ Իսահակյան երևույթը մարդու և ստեղծագործողի ներդաշնակության ու միասնության բացառիկ օրինակ է: Նրա անհատականության մեջ ինքնատիպ ամբողջություն են կազմում հասարակական-քաղաքական գործիչը, փիլիսոփան, բանաստեղծը, զգացող ու տառապող մարդը: Օրագրերի ու ծոցատետրային գրառումների միջոցով օր առ օր կարելի է հետևել, թե տարիների ընթացքում ինչպես է ձևավորվել ու զարգացել բանաստեղծի արարող միտքը, կարելի է անսխալ կռահել, թե որտեղ պետք է որոնել նրա ստեղծագործության կենսական ու հոգեբանական ակունքները, և ամբողջական պատկերացում կազմել նրա ստեղծագործական աշխատանոցի մասին:

Օրագրերն ու ծոցատետրերը պարունակում են նաև կենսագրական բնույթի շատ մանրամասներ, որոնք ցույց են տալիս, որ նա էլ է ծանր տարել հայ բանաստեղծներից գրեթե բոլորին վիճակված անձնական-ստեղծագործական դրաման՝ կապված կենցաղային բազմապիսի դժվարությունների հետ: Ահա այդպիսի բնորոշ գրառումներից մեկը. «Կատվի ձագի պես գրվածքներս բերանս առել, ման կուգամ. մի տեղ չեմ գտնում, մի երկու ամիս ապահով, որ նստեմ, վերջացնեմ»[21]:

Տասնամյակներ տևած թափառական կյանքը, հայ գործչի բազմազբաղ առօրյան, ընտանեկան հարատև հոգսերը խլել են բանաստեղծի ժամանակի, ֆիզիկական ու հոգեկան էներգիայի մեծ մասը: Մնում էին գիշերային սուղ ժամերը, այն էլ՝ ընդհատումներով: Մինչդեռ, ինչպես նշված է ծոցատետրերից մեկում, «պիտի անընդհատ, միշտ գրել, ամեն օր»[22]:

Իսահակյանի ծոցատետրային գրառումները բազմաբնույթ անմիջական աղերսներ ունեն նրա բուն ստեղծագործական աշխարհի հետ: Ամենից առաջ օրագրերն ու ծոցատետրերն առատ տեղեկու-

21 Նույն տեղում, 793–II, էջ 5:
22 Նույն տեղում, 752–II, էջ 33:

թյուններ են տալիս բանաստեղծի ստեղծագործական ծրագրերի մասին: Այսպես՝ օրագրերից իմանում ենք, որ նա մտադրված է եղել գրել մի արձակ գործ ծաղիկների կյանքի մասին, որում այլաբանորեն պիտի ներկայացներ իր մերժված սիրո պատմությունը: Մեկ այլ առիթով ակնարկվում է, որ իր ճանաչած աշխարհից ու մարդկանցից հիասթափված պատանին փորձել է հեռանալ հասարակությունից ու բնության և իր ես-ի մեջ խորամուխ լինելով՝ ստեղծել ««Ես ու աշխարհը» մի փիլիսոփայական պոեզիա»[23]:

Ժողովրդի հոգեբանությունը խորությամբ ճանաչած, նրա հոգսերով ապրող բանաստեղծը մտադիր է եղել գրել նաև վեպեր նրա կյանքի մասին: Ընդ որում, դրանք պիտի գրվեին ազգային ոգով ու ոճով, «հայկական, հայավար, հայնակ»[24]:

Իսահակյանը մտադիր է եղել նաև «Անքուն գիշերներ» խորագրով մի շարք գրել, որում պիտի ընդգրկվեին ոտանավորներ, քառյակներ, ծերունական շրջանի մտորումներ՝ «հուշեր օջախի առաջ անքուն գիշերներով»[25]:

Օրագրերում և ծոցատետրերում Իսահակյանը տարիների ընթացքում փոքր կամ մեծ ընդմիջումներով գրի է առել իր «հոգու տատանմունքները»: Այդ գրառումները, բանաստեղծի ներաշխարհի շարժման պատկերը ներկայացնելուց բացի, նաև շատ կարևոր բանալի են տալիս՝ հասկանալու նրա քնարական հերոսի ձևավորման ընթացքը, այդ հերոսի տիպն ու բնույթը, նրա կապը բանաստեղծի անձի հետ: Գրականագիտության մեջ արտահայտված այն միտքը, թե Իսահակյանի քնարական հերոսը գրեթե նույնանում է նրա հետ, հիմնավորապես հաստատվում է օրագրային գրառումներով, մանավանդ երբ խոսքը վերաբերում է սիրային քնարերգությանը: Այս մտահղացումների, ծրագրերի զգալի մասն այդպես էլ թղթի վրա է մնացել, մի մասն էլ իրականացման ժամանակ նախնական հղացումից տարբեր բովանդակություն, ձև և կերպավորում է ստացել:

Ծոցատետրերից մեկում ներկայացված է ծրագրված ստեղծագործությունների ամբողջական ցանկը.

---

23 **Իսահակյան Ավ.**, Հիշատակարան, Եր., 1977, էջ 97:
24 Նույն տեղում, էջ 277:
25 ԳԱԹ, Ավ. Իսահակյանի ֆոնդ, 775-II, էջ 17:

«***Գրեկիքներ***

1. Մասսա Մանուկը
2. Վարպետիս հետ
3. Ղազարոս
4. Միեր
5. Քրիստոսի կյանքից
6. Բաբելոնի ապստամբությունը
7. Ինքնասպանը
8. Մարգարեն
9. Սյունյաց զանգը
10. Թոնդրակեցիք
11. Տրդատ–Հռիփսիմե
12. Քույր Շուշանիկ
13. Բուդդիա
14. Հայկական ազատամարտը
(կոտորածներ, դրվագներ, հերոսական)
15. Փավստոս»[26]:

Արդեն նշել ենք, որ Իսահակյանի քնարերգության գրեթե բոլոր մոտիվները նախապես անցել են օրագրերի բովով, ենթարկվել հոգեբանական վերլուծության, դարձել խոհ, ապրում, վերապրված իրականություն, ապա նոր միայն ստացել բանաստեղծական կերպ ու ձև:

Անտիպ ծոցատետրերից մեկում ուրվագծված է մի պատմություն, որն ավելի շատ հոգով ապրվածի ճեպանկար է, բայց Իսահակյանը այն անվանում է նովել: Հավանաբար մտադիր է եղել այդ մի քանի վրձնահարվածները ծավալելով ստեղծել նովել կամ պատմվածք: Հետաքրքիր է, որ այդ ճեպանկարը շատ ընդհանրություններ ունի (մանավանդ տրամադրության առումով) «Հիշատակարանում» գրի առնված՝ Շուշիկի հետ ծանոթանալու պատմության հետ: Ահա այդ ճեպանկարը.

«Ես սիրում եմ նրան, նա էլ՝ ինձ, ես 19 տարեկան եմ, իսկ նա՝ 17:

Նա գեղեցիկ աղջիկ էր, աչքերի մեջ՝ սև բոց, մազերը՝ խուրձ-խուրձ, ձայնը անուշ, ո՛չ, այդպես չէ, շա՛տ, շա՛տ գեղեցիկ էր. աննման:

.... երբ ես տեսա նրան առաջին անգամ – սարսափեցի, ասես մահվան վճիռս պիտի լսեի, երբ նայեց աչքերով աչքերիս, հոգիս կայ–

26 Նույն տեղում, 796–II, էջ 2–3:

ծակով զարնվածի պես եղավ, երբ նայեցի նրան,– ոչինչ չէի տեսնում, միայն հուր, միայն փայլ, միայն արև, շլացուցիչ:

.... Ուզում եմ թռչել, ուզում եմ գժվել, սարերն ընկնել, բոլորին սիրել, լալ, մեռնել եմ ուզում:

Համբուրիր, և մեռնեմ, հոգիս թռցրու համբույրով, երջանկության մեջ մեռնել, սիրում եմ մեռնելու չափ, մեռնել եմ ուզում...»[27]:

Ահա և 1895 թ. «Հիշատակարանում» արտահայտված մի բնորոշ տրամադրություն. «Օ՛, ես շա՛տ եմ լացել – անքուն գիշերներով լացել եմ, և արտասուքներիս մեջ խեղդվել է իմ երգը – նրա մրմունջները»[28]: Այս տրամադրությունը, որ հիմնահենքի պես անցնում է Իսահակյանի ողջ սիրերգության միջով, 1904 թ. գրեթե բառացի կրկնվում է «Քույր իմ նազելի, նայիր քո դիմաց...» բանաստեղծության մեջ.

Քնքուշ ձեռներով աչքերս սրբիր,
Մի՛ թող ինձ լալու – ես շա՛տ եմ լացել,
Ճակատիս մռայլ մշուշը ցրրիր
Եվ գուրգուրիր ինձ, ես շա՛տ եմ լացել[29]:

Շատ ակնհայտ զուգահեռներ կարելի է անցկացնել նաև հայրենի եզերքի կարոտին, տարագրության մեջ բանաստեղծի հոգեվիճակին վերաբերող նրա օրագրային գրառումների և պանդխտության երգերի միջև: Ահա, օրինակ, մի քանի համառոտ քաղվածք այդպիսի գրառումներից. «.... հոգնած էի և փափագում էի հայրենի ափերը՝ երազի մեջ, որպես մշուշում, ես տեսնում էի այդ ծաղկավետ ափերը՝ լուռ ու անուշ հովերով....»[30], «Իմ երազների մեջ միշտ շառաչում ես դու, հայրենի գետ, և օրորում ես ինձ դեպի հանգիստ ու հավիտենական ծովը»[31]:

Բավականանանք Իսահակյանի՝ այս բնույթի գրառումների և նրա քնարերգության համապատասխան էջերի միջև եղած ուղղակի ստեղծագործական կապերն ընդգծող՝ 1911 թ. վերաբերող հայտնի բանաստեղծությունից քաղված մի բնորոշ քառատողով.

Հայրենի գետի զմրուխտ ափերին
Մեր հին տնակն է կքել մենավոր:

27 Նույն տեղում, 795–II, էջ 14–16:
28 **Իսահակյան Ավ.**, Հիշատակարան, էջ 201:
29 **Իսահակյան Ավ.**, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 1, Եր., 2003, էջ 318:
30 **Իսահակյան Ավ.**, Հիշատակարան, էջ 203:
31 ԳԱԹ, Ավ. Իսահակյանի ֆոնդ, 751–II, էջ 9:

Ախ, ես հեռավոր ճանապարհներին
Քայլում եմ հիմա մենակ ու մոլոր[32]....

Իսահակյանի իմաստասիրական բազմապիսի հետաքրքրությունները ևս, մասնավորապես կյանքի ու մահվան, գոյության առեղծվածների, կյանքի անցողիկության, արդարության ու համանման այլ խնդիրների շուրջ օրագրային մտորումներն իրենց դրսևորումներն են գտել նրա քնարերգության մեջ և արձակում: Մահվան անխուսափելիության գիտակցումը, դրանից ծագած խռովահույզ խորհրդածությունները, որ, բանաստեղծի իսկ խոստովանությամբ, նախապես երիտասարդական ռոմանտիկա էին, պեսիմիստական փիլիսոփայության հետևողություն, տարիների հետ դառնում են ավելի ու ավելի թախծոտ ու տագնապալի: Այս իրողությանն առնչվող բազմաթիվ գրառումներից բերենք միայն երկուսը.

«Մարդը անհաղթելի տենչանք ունի հավիտյան ապրելու, երբեք չմեռնելու: Նույնիսկ ամբողջ տիեզերքի կործանումից հետո էլ նա կուզե ապրել... նույնիսկ մենակ, մեն-մենակ: Սա է հիմքը, մնացածը՝ կրոն, մորալ, արվեստ, կուլտուրա, վերնաշենք է»[33]:

«Ի՞նչ է 100 տարին ապրելու համար. 1000 տարին, միլիոն տարին, միլիարդ տարին, քանի որ մահ կա, վերջ կա, ուրեմն կարճ է, անցավոր է, մարդը կյանքից չի կշտանում: Մարդը ձգտում է աստվածության և անմահության, լինել ամենակարող, ամենագետ և անմահ, հավերժական: Աստված մարդու աստվածացումն է»[34]:

Իսահակյանի այս խորհրդածությունների խտացումն է նրա վերջին քառատող բանաստեղծությունը.

Մարդու տենչանքն է՝ հավիտյան ապրել
Եվ լինել Աստված տիեզերաշեն,
Ամենակարող, ամենահզոր
Եվ ամենագետ[35]:

Իսահակյանի անտիպ ծոցատետրերը հարուստ և անփոխարինելի նյութ են պարունակում նրա ստեղծագործական աշխատանոցին վերաբերող բազմաթիվ խնդիրների լուսաբանման համար: Խնդրի բազմակողմանի քննությունը խիստ ընդգրկուն է, ուստի այս հոդվա-

---

32 **Իսահակյան Ավ.**, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 1, էջ 392:
33 ԳԱԹ, Ավ. Իսահակյանի ֆոնդ, 748-II, էջ 8:
34 Նույն տեղում, 739-II, էջ 12:
35 **Իսահակյան Ավ.**, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 2, Եր., 2011, էջ 384:

ծում հարկ ենք համարում բերել միայն մի քանի բնորոշ օրինակներ: Այսպես՝ ծոցատետրերի գրառումները վկայում են, որ իր հայտնի «Լի-լիթը» գրելու համար բանաստեղծն ուսումնասիրել է հրեական հին ավանդություններ, Աստվածաշնչի պարականոն բնագրեր, լեգենդներ ու զրույցներ: Ահա այդպիսի գրառումներից երկուսը.

«Լիլիթ, մի բառ, որ պատահում է Եսայի մարգարեի մեջ, որ Բո-խարտի (Bochart) համաձայն, նշանակում է մի թռչուն գիշերային, ուրիշների համաձայն՝ սա մի ուրվական է, մի ոգի (fantome) որ գալիս է գիշերվա մեջ հափշտակելու կամ սպանելու երեխաներին:

.... Ռաբբիների ասելով, սա Ադամի առաջին կինն էր, որ բաժան-վեց նրանից և չուզեցավ վերադառնալ նրա մոտ»[36]:

«Lilitt

Հրեաները նրան Veruse-ին էին համեմատում, ուրբաթ օրերի ոգին է. նրան ներկայացնում են մերկ, որի պոչը վերջանում է օձա-կերպ, օձանման»[37]:

Ակնարկված սկզբնաղբյուրների հետքերով գնալու դեպքում ուսումնասիրողը կարող է շատ անակնկալների հանդիպել՝ կապված ոչ միայն «Լիլիթի», այլև Իսահակյանի ամբողջ ստեղծագործության խորքային շերտերի հետ:

Ծոցատետրերում հետաքրքիր նշումներ կան նաև «Սասմա Միհր» պոեմի վերաբերյալ: 1956 թ. ծոցատետրերից տեղեկանում ենք, որ Իսահակյանը մտադիր է եղել վերամշակել վիպերգը: Ծոցատետրային գրառումներն ու սևագիր հատվածները վկայում են, որ բանաստեղծը ցանկացել է պոեմը հարստացնել Միհրի սերը և օտար նվաճողների դեմ նրա պայքարը ներկայացնող դրվագներով: Սկսված աշխատան-քը, սակայն, ավարտին չի հասցվել:

Հետաքրքիր գրառումներ կան նաև «Մասսա Մանուկ» պոեմի առնչությամբ: Օրինակ.

«Հայոց աշխարհը
արյան ծով շինել,
մեջը լողանալ և
Մասսա Մանկան
Հայոց արյան ծովում խեղդել –

36 ԳԱԹ, Ավ. Իսահակյանի ֆոնդ, 768-II, էջ 2:
37 Նույն տեղում, 796-II, էջ 3:

Նոր կառողջանա»[38]:

1932 թ. Փարիզում Իսահակյանը գրել էր «Նրանք դրոշակ ունին» պատմվածքը: 1930-ականների վերջերի ծոցատետրերը վկայում են, որ նա մտադրվել էր պատմվածքը վերածել վեպի և այդ ուղղությամբ հետաքրքիր որոշ աշխատանքներ արդեն արել էր: Ահա այդ մասին վկայող մի ծոցատետրային գրառում.

«Քնել է չորսմիլիոնանոց գլխանի վիշապը՝ Փարիզը, քաղաքը, զսպված քնի շղթաներով ու անձրևով, բայց հազարներ կան, և 10000-ներ, որոնք արթուն են. ոմանք դավեր են նյութում, ոմանք ոճիր-ներ են ծրագրում, ոմանք հղփանում են ու տռփում բոզանոցներում, և կան, որ ձեռքերի մեջ գլուխները առած՝ խորհում, տքնում, տառա-պում են....

Անաթոլը տանում է զանազան տեղեր - գողերի մոտ, բոզերի մոտ, տանում է եկեղեցի, ուր քահանան քարոզում է հնազանդություն և երկնային արքայություն, տանում է մի ժողովի, ուր ճառում են սո-ցիալիզմի դեմ, կապիտալիզմի բարիքների մասին, և տանում է, ուր խոսում են կոմունիզմի մասին....

Մի խոսքով՝ լավ ու խորունկ մտածել այս վեպի մասին, դնել իմ քաղաքական էությունը, մարդկության թշվառությունը և ելքը ցույց տալ»[39]:

Իսահակյանի ստեղծագործության մեջ բացառիկ տեղ գրավող «Ուստա Կարո» անավարտ վեպի մասին ևս, որի երկրորդ տարբերա-կի վրա բանաստեղծն աշխատել է մինչև իր կյանքի վերջը, ծոցա-տետրերում շարունակաբար արծարծվում է: Բանաստեղծը տարիներ շարունակ գրի է առել այն ամենը, ինչ լսել կամ կարդացել է, և ինչ կարող էր պետք գալ վեպի վրա աշխատելիս՝ ասացվածքներ, առակ-ներ, բանահյուսությանը բնորոշ լեզվամտածական պատառիկներ, պատմա-աշխարհագրական ինչ-ինչ փաստեր, կերպարները բնու-թագրող, ինչ-որ նոր կողմից բացահայտող կտորներ, բառ ու բանի նմուշներ և այլն: Ահա մեկ-երկու օրինակ.

«- Հարութ, մահեն հետո աշխարի չկա:

- Կարո, մահեն հետո մահ կա»[40]:

38 Նույն տեղում, 780-II, էջ 14:

39 Նույն տեղում, 754-II, էջ 9-II:

40 Նույն տեղում, 778-II, էջ 3:

Կամ՝ 1949 թ. մի ծոցատետրում.

«– Գնալն որ չեղներ, մնալն անտանելի կեղներ:
– Գալը որ չեղներ, երթալն սարսափելի կեղներ:
– Մեռնելը որ չեղներ, ապրելն սքանչելի կեղներ:
– Ապրելը որ չեղներ, մահը հեչ բան կեղներ – ամեն բան լավ կեղներ:
– Ցավ չէր եղնի:
(«Ուստա Կարո»)»[41]:

Ծոցատետրերից մեկում նույնիսկ հատուկ նշում է արել՝ «Ուստա Կարոյի համար ուսումնասիրություններ»: Նույն ծոցատետրում.

«– 1000 տարի է՝ ուզում եմ Հայաստանը ազատել, 1000 տարի:
– Էդքան երբ կաս որ, քանի՞ տարեկան ես:
– 1000 տարեկան չեմ, հմա սիրտս 1000 տարվա կարոտ ունի»[42]:

Ծոցատետրերում երբեմն հանդիպում ենք նաև հանրահայտ ստեղծագործությունների նախնական տարբերակային պատառիկնե-րի՝ տողեր, քառատողեր և այլն: Այսպես՝ 1916 թ. մի ծոցատետրում գտնում ենք

«– Էս ի՞նչ զուլում աշխարհ է,
Սրտացավ ընկեր չըկա»

հանրածանոթ տողերի տարբերակներ.

«Էս ինչ սոսկում աշխարհ է,
Սրտացավ ընկեր չկա»,

կամ.

«Էս ի՛նչ դժար աշխարհ է,
Սրտացավ ընկեր չկա»[43]:

Մեկ այլ ծոցատետրում էլ զանազան այլ գրառումների շարքում հանկարծ հայտնվում է «Երազիս տեսա՝ օրո՛ր ու շորո՛ր» բանաս-տեղծության մի տարբերակը.

Երազիս տեսա՝ օրոր ու շորոր

---

41 Նույն տեղում, 741–II, էջ 18:
42 Նույն տեղում, 792–II, էջ 13:
43 Նույն տեղում, 777–II, էջ 5:

Քարվան էր անցնում զնգալով անուշ.
Սարերի փեշով, ոլոր ու մոլոր,
Քարվան էր քոչում, զնգալով անուշ:
Ու քարվանի մեջ ես յարիս տեսա
Ուրախ, շողշողուն, հարսի շորերով,
Կրակ-կարոտով ոտները ընկա,–
Ա՛խ, քարվանն անցավ սրտիս վրայով:
Ճամբու փոշու մեջ ես ընկած էի.
Սիրտս՝ ջարդված, մենակ ու անհույս[44]...

Ծոցատետրերից մեկում կա մի հիասքանչ պատառիկ, որն ասես «Հավերժություն» արձակ պոեմից մի հատված լինի.

«Իմ բազմահազարանոց մարմնավորությունների ընթացքում ես հաճախ հմտորեն հասկանում էի աղբյուրների մրմունջը, անտառների շառաչը, կարապների վերջին երգը, որովհետև դու էիր խոսում նրանց բերանով:

– Այո՛, մի անգամ իմ պարտեզում մի սոխակ գիշերը մինչև լույս վարդիս վրա դայլայլում էր հարազատ սրտի լեզվով, երգում ինձ համար, ու ես հասկանում էի, որ դու ես երգողը... Գալիս էր իջնում ափիս վրա և երգում, երգում...»[45]:

Այս տողերը պոեմի ավարտուն բնագրում չկան, բայց անկասկած նույնն են տրամադրությունը, զգացումը, ռիթմը:

Ծոցատետրերում հանդիպում են նաև առանձին մանրապատումներ, որոնք կարող են ներկայանալ ինքնուրույն գեղարվեստական արժեքով: Միայն մի օրինակ.

«Նոր Բայազետի մոտիկ Ղշլաղ գյուղում մի գյուղացի վար էր անում: Նրան հարցնում են.

– Երբ սկսում ես վարել, հին մարդկանց պես Աստված չե՞ս կանչում:

Գյուղացին պատասխանում է.

– Աստված ով է, որ նրան կանչեմ, նրա հերն էլ անիծած, մենք՝ կոմունիստներս, Աստված չենք կանչում, նրա հետ գործ չունենք:

– Իսկ կի՞նդ էլ չի կանչում:

– Չէ, կնիկս կանչում է:

44 Նույն տեղում, 794–II, էջ 15:
45 Նույն տեղում, 785–II, էջ 36:

– Ինչի՞ ես թողնում...

– Բա, ընկեր ջան, ես չկանչեմ, կնիկս չկանչի, մեր բանը ո՞նց կլինի: Կքանդվենք... էէ...»[46]:

Եզրակացություններ

Իսահակյանի օրագրերն ու ծոցատետրերը, այսպիսով, ներկայացնում են նրա անձնական ու ստեղծագործական կյանքի վավերավեպը: Բացառիկ անկեղծությամբ նա ընթերցողի առջև բացում է հայ մարդու, հայրենասերի, քաղաքացու, մտածողի, մերժված սիրո տառապանքն ապրած անհատի, թափառական կյանքի բոլոր դառնությունները ճաշակած պանդուխտի դրամատիկ ներաշխարհը: Օրագրերն ու ծոցատետրերը ցույց են տալիս նաև, որ ստեղծագործական աշխատանքն Իսահակյանի համար ամենուրեք եղել է առօրյա կյանքի մի մասը, անընդհատ շարունակվող ընթացք: Ստեղծագործության ավարտուն բնագիրը թղթին հանձնելու պահը եղել է մտքի և հոգու լուռ ու բազմախորհուրդ համմանվագի վերջին ակորդը միայն: Ահա թե ինչու սերունդների համար ուսանելի շատ բան ունի ոչ միայն նրա ստեղծագործությունը, այլև կյանքի հարուստ ու բազմաբովանդակ պատմությունը:

Բանաստեղծի ծոցատետրերը և՛ բովանդակությամբ, և՛ ստեղծագործական գործընթացում իրենց նշանակությամբ, և՛ գրառումների բնույթով խորապես արտացոլում են հեղինակի անհատականությունը, նրա հոգու կենսագրությունն են:

Շողիկ Բ. Խաչատրյան – հեղինակ է 7 գիտական հոդվածի և բնագրագիտական 2 աշխատանքի: Զբաղվում է Ավ. Իսահակյանի «Երկերի լիակատար ժողովածուի» ակադեմիական հրատարակության խմբում բնագրերը և բնագրային տարբերություններն ու տարբերակները հրատարակության պատրաստելով:

Էլ. հասցե՝ shogher.kh@gmail.com

46 Նույն տեղում, 748-II, էջ 8:

Summary

THE BIOGRAPHY OF THE POET'S SOUL
The unpublished pages of Avetik Isahakyan’s notebooks

Shoghik B. Khachatryan
Candidate of Sciences in Philology

Key words – Diary, unpublished notebook, structure, general characteristics, aphorism, stylistic possibilities, etymology, travel impressions, political observations, creative workshop, literary method, lyrical hero, poetic motifs, a small short story.

In 1977 A. Inchikyan prepared Avetik Isahakyan's "Memoir" for publication, collected and organized notes from the poet’s various notebooks – in fact creating a complete manuscript. Within the framework of the scientific publication of Isahakyan's works, Avik Isahakyan filled in the blank sections of the "Memoir" with other diaries and selected diary notes. However, even after the publication of the complete diaries, a large number of the poet's notebooks remained unpublished.

Notebooks contain a variety of notes in various booklets, or individual sheets. Mainly, they present the poet's thoughts, ideas, judgments about various realities and different aspects of life. A considerable part of them have the value of aphorisms and popular expressions.

But the more interesting notes are those which, in one way or another, relate to Isahakyan's original work, opening up various layers of his literary workshop. How the writer's style and the peculiarities of his literary method are formed, how raw material, a fact, an event are developed and transformed into artistic reality! Here is a non-exhaustive list of issues that may be covered by notebook notes.

Thus, the poet's notebooks, in terms of both their content and significance in the creative work process, and the nature of their notes, deeply reflect the author's personality, and the biography of his soul.

Резюме

БИОГРАФИЯ ДУШИ ПОЭТА

Неизданные страницы записных книжек Аветика Исаакяна

Шогик Б. Хачатрян
Канд. филол. наук

Ключевые слова – дневник, неизданные записные книжки, структура, общая характеристика, афоризм, стилистические возможности, этимология, путевые впечатления, политические наблюдения, творческая мастерская, литературный метод, лирический герой, поэтические мотивы, миниатюра.

А. Инчикян собрал и систематизировал записи из разных тетрадей и записных книжек Аветика Исаакяна и в 1977 г. подготовил к изданию «Дневник» («Հիշատակարան») поэта.- В рамках научного издания сочинений Исаакяна внук поэта – Авик Исаакян, дополнил «Дневник» записями из других дневников и–записных книжек поэта. Однако после публикации дневников, полностью остался неопубликованный материал из огромного количества записных книжек поэта.

Записные книжки представляют собой разнообразные по содержанию записи в тетрадях, брошюрах или на отдельных листках. В них в основном сформулированы мысли, размышления, суждения поэта, которые ценны как афоризмы, крылатые выражения.

Однако наиболее интересны записи, которые тем или иным образом касаются самих произведений Аветика Исаакяна. Они раскрывают различные слои его литературной мастерской, поясняют, как формируется стиль писателя, особенности его литературного метода, как источник, факт, случай перерабатывается, перерастает в художественную реальность. Вот неполный ряд проблем, освещению которых может способствовать изучение записных книжек поэта.

Таким образом, записные книжки поэта и по содержанию, и по своему значению, и по характеру записей отражают индивидуальность автора в творческом процессе, являются биографией его души.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Անտիպ ծոցատետրեր, ԳԱԹ, Ավ. Իսահակյանի ֆոնդ:
2. **Իսահակյան Ավ.**, Աֆորիզմներ, Եր., 2001:
3. **Իսահակյան Ավ.**, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 1, Եր., 2003, հատ. 2, Եր., 2011:
4. **Իսահակյան Ավ.**, Հիշատակարան, Եր., 1977:

REFERENCES

1. Antip tsots‘atetrer, GAT‘, Av. Isahakyani fond **(In Armenian)**.
2. **Isahakyan Av.**, Aforizmner, Yer., 2001 **(In Armenian)**.
3. **Isahakyan Av.**, Yerkeri liakatar zhoghovatsu, hat. 1, Yer., 2003, hat. 2, Yer., 2011 **(In Armenian)**.
4. **Isahakyan Av.**, Hishatakaran, Yer., 1977 **(In Armenian)**.

Ներկայացնենք անտիպ մի նմուշ՝ 1940 թ. գրառված ծոցատետրը, որը պահվում է Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում՝ Ավ. Իսահակյանի ֆոնդում՝ 581–II թղթապանակում:

***

– Վրացի գրողները լավ քեֆեր են անում, իրար հետ սրտաբաց, անկեղծ, իրար գգվում, համբուրում, գովում, իսկ մեզ մոտ՝ նախանձով կուրացած, միայն թշնամիներ՝ չարախնդաց, նենգ, վատ: Գրողների հետ նույնիսկ ոչ գրողներ, այլ բժիշկներ, տնտեսագետներ, նույն սիրով, իրար գրկում, համբուրում: Վերջիններս արտասանում են բանաստեղծների գրվածքներից: Եվ առհասարակ՝ մեծ հայրենասերներ են, և չեն թաքցնում այդ. բացարձակ ասում են. «Մենք հայրենասերներ ենք, դրանով հպարտանում ենք, մենք սիրում ենք մեր ազգն ու հայրենիքը, մեր անցյալը, մեր գրականությունը: Ի՞նչ է մի բանաստեղծ, մի ժողովուրդ, երբ չի սիրում իր հայրենիքը»:

Եվ գիտեն իրենց պատմությունը, լեզուն և խոսում են իրար հետ վրացերեն:

***

– Նրանք այնպես լավ, բուռն քեֆ են անում, որ ասում են ինձ. «Երբ մենք քեֆ ենք անում, շտապ օգնության կառքը սպասում է մեր դռանը»:

– Ընտիր մարդիկ, թռիչքով մարդիկ, լոթի, ընկերական...

– Ես ոտք դրի վրացական հողը՝ հին ու նոր վառ բանաստեղծներով: Դարեր երգված սրբազան հողը, հերոսների արյունով օծված, այն հողը, ուր աճում են բարձր կաղնիներ, ուր ձիերն հեծած սլանում են դեռ ասպետ տղերք, ուր խաղողի այգիների միջով անցնում են եղնիկի պես աղջիկներ՝ բարձր բսնած հոնքերով:

– Ուր որ մի քար կա՝ վրան հայ վարպետի ձեռքը դիպած, միշտ պիտի լինի:

– Երբ ուսումնասիրվի մեր անցյալը, մեր քարերը կկենդանանան, լեզու կառնեն:

***

– Տպավորությունները ամփոփել (գումարը տալ, կարևորները, տիպականը):

– Վրաստանի բնության ֆոնի վրա գրել վեպը, պեյզաժի ֆոնի վրա:

– Տպավորությունները պիտի կրկնել, որ ամրանան, և ոչ թե կենդանի պատկեր դառնան, երազի պես:

– Ինձ կոնկրետ հարկավոր է վանքը տեսնել:

– Կյանք և մահ՝ կոնվեեր:

– Աբասթումանի փողոցները, տեղերը շատ <ռելիֆ>ած են, շուտ կարելի է գտնել տները:

– Թոփուզներ միշտ կան լուսամուտների գլխին ու կողքերը և գմբեթի լուսամուտների վրա:

– Գինի և ինտուիցիա՝ հավասար են. աշխատանք և գիտություն – նույնն են. սրանք իրար հակառակ են, բայց լրացնում են:

Տեխնիկա և էմոցիոնալը իրար լրացնում են:

***

Սաֆարի – 12-րդ դար. թերևս՝ հին մասը:

Վանքի ներսի պատերը՝ հասարակ քարերով, լեռ-քարերով:

Հատկանշական են կարճ ու հաստ սյուները վերնահարկի:

Պատկերապաշտության մեծ ապացույցներ – լիքը ֆրեսկներ և նոր պատկերներ:

Կռապաշտության շարունակություն. խաչեր և այլն:

–––

Ռուսական-վրացական խաչերը՝ անհավասար, ներքին խաչի մասը՝ երկար:

Դրսի պատի վրա՝ լուսամուտի աջ-ձախ կողմերը, թոփուզները, որ հատկանշական է վրաց արխիտեկտուրայի մեջ:

***

– Թիֆլիզ, վրացիներ –
խաշի, լավաշի,
տաշի-տուշի.
Կենաց վալե, շենի ճիրիմե.

– Աշխարհներ կան, որ երբ մարդ ծնվում է, լաց են լինում: Երբ մեռնում է, քեֆ են անում, զուռնա-դավուլով թաղում:

– Քանի որ մահ կա, և Աստված չկա, ամեն բան ներելի է:

***

– Բաքու, Թիֆլիզ հայերից (յուրաքանչյուր) համալսարան մտնելու համար վերցնում են մոտ 1000 ռուբլի: Խեղճ հայ ուսանողներ, որ ավարտեն, ո՞ւր պիտի գործեն: Ո՛չ մի տեղ չեն տալու նրանց:

– Յուրաքանչյուր հայ, որ արժանացել է շքանշանի, մեդալի, կոչումի, նա իրավունքով է ստացել, արյունով, աշխատանքով, ազնվությամբ է վաստակել: Դժվարությամբ են ձեռք բերում հայերը, իսկ վրացիները, ադրբեյջանցիները՝ անարժան կերպով, ձրի՝ շնորհիվ իրենց նավթի, բամբակի, մարգանեցի, ցիտրուսների և այլ մոմենտների ու հանգամանքների:

– Հրեաները, մեկն ասում է, այնքան են իրենց մարմինը սիրում, իրենց կյանքը սիրում, որ չեն ուզում ոչ մի հաճույքի վայրկյան կորցնել, չօգտվել, չվայելել...

– Սոչիում հայկական նացմենական կլուբը փակեցին, դպրոցը փակեցին, և հայ կյանքը մեռավ, վերջացավ: Նացմեն գաղափարը թաղեցին ռուսները, ինչպես վերջ ի վերջո ջնջելու են և ռեսպուբլիկաները, այսպես կոչված «անկախությունները» Ռուսիայում. կաշա, բորշչ, սալաթ...

***

– Ղազարոսի մեջ պետք է միայն շեշտել մահվան սարսափի ներկայությունը, աչքերի մեջ, որոնց որ նայում էր, համակվում էր, վարակվում էր մահվան սարսափով: Քեֆ անող տղան, որ ասում էր՝ աշխարհքը իմն է, ո՛չ մի բանից չեմ վախենում. մահից չեմ վախենում... բայց երբ տեսավ Ղազարին, սարսափեց, գունատվեց, դալկացավ, թառամեց... մեռավ: Իսկ գուշակության երևույթը, գուշակելու շնորհքը, որ մի աչքով տեսնում էր անցյալը, մյուսով՝ ապագան, աստղի ծնունդն ու մահը, ազգերի ծնունդն ու մահը, ամեն մարդու ծնունդն ու մահը և բոլորի (աստղերի, ազգերի, մարդկանց) կյանքի ընթացքը, դեպքերի շարանը, ճակատագիրը, կենսագրությունը... Այդ ուրիշ ձևով գրել կամ հասարակ լեզվով, ոճով. Ու<տա> Կարոյի բերանով կամ իմ՝ երազի, ֆանտազիայի հնարանքով: Հիմալայների ծագումն ու ջնջումը: Եվրոպայի ծագումն ու ոչնչացումը, Հռոմի, [Ֆրանսիայի,] Անգլիայի, Թյուրքիայի...

***

– Վրացիները իսկապես թեթևսոլիկ, թեթևամիտ, զվարթ, անհոգ, լոթի մարդիկ են, բայց շա՛տ բախտավոր: Գոռոզ են և համարձակ, լոպպազ և նախանձոտ, ինքնահավան:

– Ո՛վ դու բարեկամ, Իզմիրի քաղաքացի Վորոշիլով, ականջդ կանչի, երբ ասում էիր՝ այս արմյաշկաները...

***

– Շաքար ցանեցի, (հերու) անձրև եկավ, փչացավ, էս տարի լամպի շուշա ցանեցի, կարկուտը զարկեց, փչացուց:

– Ջատկին Աբիսողոմի հետ արդար տուն, մեղավոր տուն ման կուգայինք* (*տոն շնորհավորելու)[47] – էշը, եզի փոխարեն՝ ինքը և գյուղացին:

– Ամեն տռողին որ քիթդ դեմ անես, քիթդ կթափի (հասարակաց կարծիք):

– Մոլլան ասում է՝ ամեն մարդու որ լսես, եզդ շալկած պիտի ճամփա երթաս:

***

– Վրացիների երկարակեցության գաղտնիքը – գինի, անհոգությունը, ներվերով և ուղեղով չապրելը:

– Ինտելիգենցիա, դիալեկտիկա, ժողովուրդ, ապադասակարգայնություն:

– Դիմազուրկ անել – ապազգայնացնել, որպեսզի հետո ձուլել:

– Ստախանովական շարժում:

– Վրացերեն գիտե՞ք:

– Չէ:

– Վազն արիք:

– Հայ գրողների գերեզմանները ոչնչացրին: Մաղձը հին դեռ կա:

***

– Ախալցխայի թուրքերի գյուղերի թիվն էր 120. դրանց բոլորին քշել են: Տեղը վրացի լցրել: Այն ծառերը (խրթգի, խրթեզ), որոնց թուրքերը իրենց երեխաներից ավելի էին սիրում, կոտրում են վրացիք, այրում: Չեն գնահատում, չեն հասկանում:

– Ասում են՝ վրացիք շատ խելացի մարդիկ են. շատ խելացի (իրենց համար) գործեր են տեսնում, շա՜տ են առաջ գնացել. հարյուր տարի վազենք հետևներից, չենք հասնի:

***

– Սազը ունի 10 լար և դրա համար կոչվում է Տասնաղի քնար:

– Տրիալետ = Ծալկա.

Տրիղք = հայերեն.

– Փանջո Կարո = զուռնաչի, դյուդուկչի.

---

47 Ծանոթագրությունը՝ Ավետիք Իսահակյանի:

Ղափլեցի Ուստա Մուկուչի (նշանավոր Մուկուչ) քրոջ թե եղբոր տղան: Լենինականում. հիմա կուրացել է:

– Թիֆիլ Սարգիս, ղափըլեցի:

Ապարան գնացող եղբայր,

Սիրելի յարիս բարև տար...

Այդ երգի և այդ սիրո հեքիաթի հեղինակը:

Սիրած աղջկան տանում են. աղջիկը հասնում է Ապարան, թույն է խմում և մեռնում:

***

– Սատիրա. «Վրացական հայրենասիրությունը».

Ես այն ժամանակ եմ սիրում Վրաստանը, երբ խորոված ունեմ, գինի, սևաչյա վրացուհի, իսկ եթե դրանք չկան, ես կմոռանամ և՛ վրացերենը, և՛ հայրենիքս...

– Սատիրա. «Մի քանիսի աղոթքը».

չարակամություն, չարախնդացություն, նախանձ...:

– «Աշխատավորի, գյուղացու իղձը».

Գոհ է իր աշխատանքից, չի ուզում ուրիշի քրտինքը: Աշխատել և ապրել:

***

«Ով իմ գլուխ»,

«Թավո չիմո».

Վրացու՝ ժողովրդի ամենասիրած երգը, և բառերը, և մոտիվը:

Սիրո էլեգիա.

«Ով իմ գլուխ, քեզ համար բախտ չի գրվել» –

տարածված չափազանց:

Գրված 1871 թ.

Մանկությունից լսել եմ:

***

– Հայաստան կնշանակե հայ լեզու: Օտար երկրներում մեռնում է հայ լեզուն: Լեզուն ապրում է այնտեղ, ուր ծնվել է:

– Հավիտյան տանջվող և հավիտյան հուսացող հայ ժողովուրդ:

– Վրացիները միայն թրքական ջարդ չեն կազմակերպել հայերի գլխին. եթե ո՛չ՝ ամեն բան արել են՝ հայերին ոչնչացնելու համար: Թալան, կողոպուտ, ավազակություն, մասսայական ձերբակա–

լումներ և բանտերում ոչնչացնել... և այլն, և այլն: Թուրքի երկրորդ վարիանտը:

***

«Թիֆլիզ (Տպխիս, Թպիլիսսի քալաքի), Քրիստոսի 469 թվին վրաց Քուրտասլան թագավորը շինեց: (Մծխիթա)

Վրացիք բարձրահասակ, ուժով ու վայելուչ կազմվածք ունեն. աչվընին սևագույն ու խոր է, քթերնին՝ երկայն ու արծվառունգն, մորթերնին՝ խիստ ճերմակ. և ամենեն գեղեցիկ ժողովրդյան կարգը կսեպվին: Ի սկզբանե թշնամի ազգաց մեջ բնակելով՝ պատերազմի վարժ ու սրտոտ են. մտոք ալ՝ բարակամիտ, շահասեր, խորամանկ ու քիչ մը չափազանց կերուխումի և զվարճության սիրող:

Իրենք զիրենք քարթալի կամ քարթլի կանվանին. լեզունին կովկասային ազգաց լեզուներուն նման է, թեպետև իրենց արմատական բառերովը և քերականությամբը՝ մեկալնոնցմե շատ տարբեր:

Վանքերի մեջ նշանավոր է Սիոնի վանքը, որ Աթենի ըսված ավանին մեջն է, հայոց ճարտարապետությամբ շինված: Թիֆլիզի բնակիչների թիվը՝ 33 000-ի մոտ, որոնցմե գրեթե 20 000 հայ է: Մնացածը՝ վրացի, թաթար, պարսիկ, ռուս, իմերեթ, օսեթ» – 1849 թ. «Բազմավէպ»:

***

– Նայում ես Վրաստանին. առանձնահատկություն ունեցող երկիր, գույն, հոգի, ոգի, ոճ, կնիք, դրոշմ, տրամադրություն, ազգային երկիր ձևով... Ուրիշ մի աշխարհ՝ զանազան աշխարհների շարքին. ոչ թե պատճեն մի այլ ժողովրդի, իմիտացիա, նմանողություն:

– Հիշում եմ՝ իմ մանկության ժամանակ մեր երկիրը, հենց Շիրակ գավառը, իր ոգին ուներ, իր ձայնը, իր լեզուն, բարբառը, ոճը, երգը, պարը, խոսքը... Ինչպես է ապրում մի ազգ մյուս ազգերի մեջ. մի ազգ՝ իր ինքնուրույն դեմքով ու հոգով: Նա ապրում է՝ հին տրադիցիաները պահելով և նոր սերունդներին հանձնելով: Նորը, երբ ստանում է, պատվաստում է հինի վրա, ներդաշնակում է. ներաճում է հնի մեջ: Ազգը պաշտում է իր սրբությունները, սովորույթները,

բարքերը... Այդպիսով պահում է իր ուրույն մտայնությունն ու զգայնությունը:

Հիշում եմ՝ ինչպես մեր գյուղացին ու քաղաքացին, մանավանդ գյուղացին՝ ազգության սնահողը, արմատը, ուխտի գնալիս մեր վանքերին՝ Հոռոմոս, Բագրան, Հառիճ և այլն, և այլն, չոքում է, համբուրում սրբության պատերը, լալիս, աղոթում և լցվում ուժով, նախնիների ավանդած հոգով, զգացմունքներով. լիցք է ստանում ենթագիտակցական ազգայնությամբ, կամ անգիտակից ազգայնությամբ, ազգասիրությամբ, հայրենասիրությամբ, որ արդեն բնազդորեն, ենթագիտակցորեն իր ներսում ուներ հազար տարիներից մնացած կենդանի: Եվ այդ ուժով լցված՝ գնում էր իր գյուղը, իր օջախը վառում և դրանցով դիմադրում, այդ հոգեկան զենքերով դիմադրում օտար լծի անբարոյականացմանը, թուրքին ու պարսկին, ռուսին...